



ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/137/2025

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան

16 մայիսի 2025թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի, Արմեն Մարությանի և Լիլիթ Ալեքսանյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), 2025 թվականի մայիսի 16-ին քննելով Վերաքննիչ քրեական դատարանի դատավորի օգնական Մերի Արթուրի Երիցյանի ընտանիքի անդամ Արթուրի Գեղամի Երիցյանի կողմից ներկայացված՝ պաշտոնատար անձի ընտանիքի անդամի՝ 2023 թվականի գույքի, եկամուտների և ծախսերի տարեկան հայտարարագրում (այսուհետ՝ Հայտարարագիր) անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանքի վերաբերյալ **թիվ ՎԻՎ/137/2025 վարչական գործը**

ՊԱՐԶԵՑ

1. Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը.

1.1 Հանձնաժողովը, ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26.1-րդ հոդվածով սահմանված կարգով՝ Վերաքննիչ քրեական դատարանի դատավորի օգնական Մերի Արթուրի Երիցյանի վերաբերյալ իրականացված բարեվարքության ուսումնասիրության շրջանակում ուսումնասիրել է վերջինիս

ընտանիքի անդամ Արթուրի Գեղամի Երիցյանի գույքային դրությունը, այդ թվում՝ նախկինում ներկայացված հայտարարագրերը: Ուսումնասիրության ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ նույն օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրականացվել է հայտարարագրերի վերլուծություն և ստուգում, որի արդյունքում պարզվել է հետևյալը՝

1) Կադաստրի կոմիտեից ստացված տվյալների համաձայն՝ 2011 թվականին Արթուր Երիցյանը ժառանգություն է ստացել քաղաք Երևան, [REDACTED], [REDACTED], մինչդեռ պաշտոնատար անձի ընտանիքի անդամի՝ Հայտարարագրի վերոնշյալ անշարժ գույքերի վերաբերյալ տվյալներ չի հայտարարագրել:

2) Մերի Արթուր Երիցյանը բարեվարքության հարցաթերթիկի վերջին երեք տարիների եկամուտներ բաժնում ներկայացրել է Արթուր Երիցյանի՝ 18,150,000 ՀՀ դրամի չափով ստացած կենսաթոշակի վերաբերյալ տվյալներ, մինչդեռ Արթուր Երիցյանը Հայտարարագրում նշված եկամտի վերաբերյալ տվյալներ չի հայտարարագրել:

3) Պետական ռեգիստրի էլեկտրոնային շտեմարանից ստացված տվյալների համաձայն՝ 2019 թվականի հունվարի 24-ից հանդիսանում է «ԱՐՄԱԿՎԱ» ՍՊԸ-ի 50% բաժնետեր (գործունեության տեսակը՝ բնական հանքային և այլ շշակցված ջրերի արտադրություն), մինչդեռ բաժնեմասնակցության վերաբերյալ տվյալները հայտարարագրված չէ Հայտարարագրի «Արժեթղթեր և այլ ներդրումներ» բաժնում:

4) ԿԲ-ից ստացված տվյալների համաձայն՝ 2023 թվականի տարեվերջին Արթուր Երիցյանի բանկային հաշվի մնացորդը կազմել է 540,405 ՀՀ դրամ, մինչդեռ Հայտարարագրի տարեվերջին նշված բանկային հաշվի մնացորդը չի հայտարարագրվել:

5) ԿԲ-ից ստացված տվյալների համաձայն՝ 2018 թվականին անշարժ գույքի ձեռքբերման համար կատարել է 21,336 ԱՄՆ դոլար (մի բանկով՝ 8,633 ԱՄՆ դոլար, մեկ այլ բանկով՝ 12,703 ԱՄՆ դոլար), 2019 թվականին՝ 50,812 ԱՄՆ դոլար, 2021 թվականին՝ 13,600 ԱՄՆ դոլար, մինչդեռ Կադաստրի կոմիտեից ստացված տվյալների համաձայն, 2018-2023 թվականներին առուվաճառքի պայմանագրի հիման վրա անշարժ գույք ձեռք

չի բերել: Մերի Երիցյանի կողմից ներկայացված պարզաբանման համաձայն՝ նշված վճարները կատարել է Վրաստանում կառուցվող թվով 3 անշարժ գույքերի գնման իրավունք ձեռք բերելու նպատակով, մինչդեռ հանձնված փոխառության վերաբերյալ տվյալներ չի հայտարարագրել Հայտարարագրերում:

6) Հայտարարագրի տարեսկզբին հայտարարագրել է 50,000 ԱՄՆ դոլար Հակոբ Խաչատուրյանին հանձնված փոխառության վերաբերյալ տվյալ, ինչպես նաև տարվա ընթացքում հանձնված ևս 50,000 ԱՄՆ դոլար փոխառություն, իսկ տարվա վերջում փոխառության վերաբերյալ տվյալներ չի հայտարարագրել:

1.2 Հանձնաժողովը վերը նշված տվյալների հիման վրա արձանագրել է, որ առերևույթ առկա են Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանքի հատկանիշներ և 2025 թվականի մայիսի 8-ին Արթուրի Երիցյանին հասցեագրել է թիվ 01/1937-2025 գրությունը՝ խնդրելով գրությունը ստանալուց հետո՝ 3-րդ աշխատանքային օրը, ժամը՝ 15:30-ին անձամբ կամ ներկայացուցչի միջոցով ներկայանալ Հանձնաժողով վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու համար, իսկ 5-րդ աշխատանքային օրը, ժամը 15:30-ին՝ գործի քննությանը մասնակցելու նպատակով (հիմք՝ AL0127858463AM ծանուցագիր):

1.3 2025 թվականի մայիսի 14-ին պատշաճ ծանուցված Արթուրի Երիցյանի ներկայությամբ, կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ/79/25 արձանագրությունը՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված առերևույթ իրավախախտման հատկանիշներով:

1.4 Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված Արթուրի Երիցյանի ներկայությամբ 2025 թվականի ապրիլի 16-ին, ժամը՝ 15:30-ին, տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշումը ու պարզաբանումները

Վարույթի մասնակից Արթուրի Երիցյանը, ներկայանալով գործի քննությանը, Հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունների 1-ին կետի կապակցությամբ հայտնել է, որ հայրիկի մահից հետո ժառանգություն է ստացել այդ

երկու ավտոտնակները, սակայն այդ ավտոտնակների վերաբերյալ չի ստացել սեփականության իրավունքի վկայական, ուստի գտել է, որ չպետք է հայտարարագրի: Նշել է նաև, որ տնօրինել է այդ ավտոտնակները, սակայն որպես փաստացի տիրապետվող գույքի վերաբերյալ տվյալները հայտարարագրելու վերաբերյալ չի իմացել, որ Հայտարարագրում պետք է նշվի:

2-րդ կետի վերաբերյալ հայտնել է, որ թոշակի վերաբերյալ տվյալները լրացրել է Մերի Երիցյանի բարեվարքության հարցաթերթիկում, սակայն որպես եկամուտ չի հայտարարագրել:

3-րդ կետի առնչությամբ նշել է, որ ընկերոջ հետ գրանցել են «ԱՐՄԱԿԱ» ՍՊ ընկերությունը, սակայն որևէ գործունեություն չեն իրականացրել, որից հետո 2021 թվականին ընկերության գործունեությունը ժամանակավորապես դադարեցվել է:

4-րդ կետի կապակցությամբ հայտնել է, որ սխալմամբ որպես թոշակի բանկային հաշվի մնացորդ 540,405 ՀՀ դրամի փոխարեն նշել է աշխատավարձի բանկային հաշվի մնացորդի 177,467 ՀՀ դրամ գումարը:

5-րդ կետի վերաբերյալ հայտնել է, որ անշարժ գույքի ձեռքբերման համար փոխանցումները կատարել է բանկով և չի կարծել, որ դա որպես փոխառություն պետք է դիտարկվի: Նշել է նաև, որ հիմա էլ չի կարծում, որ դա որպես փոխառություն պետք է դիտարկել, քանի որ պայմանագիրը նախնական գնման պայմանագիր է և, որ ոչ մեկին փոխառություն կամ պարտքով գումար չի տվել: Հանձնաժողովին ներկայացրեց անշարժ գույքի առուվաճառքի նախնական պայմանագիրը:

6-րդ կետի առնչությամբ հայտնել է, որ դեռևս 2020 թվականին Հակոբ Խաչատուրյանին տվել է 50,000 ԱՄՆ դոլար, որի վերաբերյալ առկա է դատարանի վճիռ, որ բռնագանձվի այդ գումարը, ուղղակի սխալմամբ «տվյալ տարվա վերջում առկա փոխառության գումարը» դաշտում լրացնելու փոխարեն նշել է «տարվա ընթացքում հանձնված փոխառության գումարը» դաշտում:

III Վարույթի համար էական նշանակություն ունեցող փաստեր

Հանձնաժողովը, ուսումնասիրելով թիվ ՎԻՎ/137/2025 գործում առկա նյութերը, կատարել է հանգամանքների քննություն և հաստատված է համարում, որ՝

3.1 Հայտարարագրի «Ա.1. Հայտարարատու պաշտոնատար անձի տվյալները» բաժնի տվյալների համաձայն՝ Արթուրի Գեղամի Երիցյանը հանդիսանում է Վերաքննիչ քրեական դատարանի դատավորի օգնական Մերի Արթուրի Երիցյանի ընտանիքի անդամ:

3.2 «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածով սահմանված կարգավորումների համաձայն՝ Վերաքննիչ քրեական դատարանի դատավորի օգնական Մերի Արթուրի Երիցյանի ընտանիքի անդամ Արթուրի Գեղամի Երիցյանը հանդիսանում է գույքի, եկամուտների և ծախսերի հայտարարագրման պարտականություն ունեցող անձ:

3.3 Կադաստրի կոմիտեից ստացված տվյալների համաձայն՝ 2011 թվականին Արթուր Երիցյանը ժառանգություն է ստացել քաղաք Երևան, [REDACTED], [REDACTED], մինչդեռ պաշտոնատար անձի ընտանիքի անդամի՝ 2023 թվականի գույքի, եկամուտների և ծախսերի տարեկան հայտարարագրում (այսուհետ՝ Հայտարարագիր) վերոնշյալ անշարժ գույքերի վերաբերյալ տվյալներ չի հայտարարագրել:

3.4 Մերի Արթուր Երիցյանը բարեվարքության հարցաթերթիկի վերջին երեք տարիների եկամուտներ բաժնում ներկայացրել է Արթուր Երիցյանի՝ 18,150,000 ՀՀ դրամի չափով ստացած կենսաթոշակի վերաբերյալ տվյալներ, որը 2023 թվականի համար որպես չհայտարարագրված եկամուտ կազմել է 6,050,000 ՀՀ դրամը, մինչդեռ Արթուր Երիցյանը Հայտարարագրում նշված եկամտի վերաբերյալ տվյալներ չի հայտարարագրել:

3.5 Պետական ռեգիստրի էլեկտրոնային շտեմարանից ստացված տվյալների համաձայն՝ 2019 թվականի հունվարի 24-ից հանդիսանում է «ԱՐՄԱԿՎԱ» ՍՊԸ-ի 50% բաժնետեր (գործունեության տեսակը՝ բնական հանքային և այլ շշալցված ջրերի արտադրություն), մինչդեռ բաժնեմասնակցության վերաբերյալ տվյալները հայտարարագրված չէ Հայտարարագրի «Արժեթղթեր և այլ ներդրումներ» բաժնում:

3.6 ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տվյալների համաձայն՝ 18.01.2021 թվականից «ԱՐՄԱԿՎԱ» ՍՊԸ-ի գործունեությունը ժամանակավորապես դադարեցված է:

3.7 Կենտրոնական բանկից ստացված տվյալների համաձայն՝ 2023 թվականի տարեվերջին Արթուր Երիցյանի բանկային հաշվի մնացորդը կազմել է 540,405 ՀՀ դրամ, մինչդեռ Հայտարարագրի տարեվերջին նշված բանկային հաշվի մնացորդը չի հայտարարագրել:

3.8 Կենտրոնական բանկից ստացված տվյալների համաձայն՝ 2018 թվականին անշարժ գույքի ձեռքբերման համար կատարել է 21,336 ԱՄՆ դոլար (մի բանկով՝ 8,633 ԱՄՆ դոլար, մեկ այլ բանկով՝ 12,703 ԱՄՆ դոլար), 2019 թվականին՝ 50,812 ԱՄՆ դոլար, 2021 թվականին՝ 13,600 ԱՄՆ դոլար, մինչդեռ Կադաստրի կոմիտեից ստացված տվյալների համաձայն, 2018-2023 թվականներին առուվաճառքի պայմանագրի հիման վրա անշարժ գույք ձեռք չի բերել: Մերի Երիցյանի կողմից ներկայացված պարզաբանման համաձայն՝ նշված վճարները կատարել է Վրաստանում կառուցվող թվով 3 անշարժ գույքերի գնման իրավունք ձեռք բերելու նպատակով, մինչդեռ հանձնված փոխառության վերաբերյալ տվյալներ չի հայտարարագրել Հայտարարագրերում:

3.9 Հայտարարագրի տարեսկզբին հայտարարագրել է 50,000 ԱՄՆ դոլար Հակոբ Խաչատուրյանին հանձնված փոխառության վերաբերյալ տվյալ, ինչպես նաև տարվա ընթացքում հանձնված ևս 50,000 ԱՄՆ դոլար փոխառություն, իսկ տարվա վերջում փոխառության վերաբերյալ տվյալներ չի հայտարարագրել:

3.10 Ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի՝ երկու հազար ինը թվականի նոյեմբերի քսանին Արթուր Երիցյանը իր հոր՝ Գեղամ Երիցյանի հետ հավասար բաժիններով ժառանգություն է ստացել քաղաք Երևան, [REDACTED] [REDACTED]:

3.11 Ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի՝ երկու հազար տասնմեկ թվականի հունիսի քսանյոթին Արթուր Երիցյանը ժառանգություն է ստացել քաղաք Երևան, [REDACTED]:

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները.

4.1 Օրենքի 34-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի չափահաս անդամները համարվում են

հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձ և հայտարարատու պաշտոնատար անձի հայտարարագրում լրացնում են իրենց գույքի, եկամուտների և ծախսերի վերաբերյալ տվյալները, պատասխանատու են դրանց իսկության համար:

4.2 Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ հայտարարագիրը ներառում է հայտարարատուին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքը՝ հողամասը, ընդերքի մասը, մեկուսի ջրային օբյեկտը, անտառը, բազմամյա տնկին, ստորգետնյա և վերգետնյա շենքը, շինությունը, հողին ամրակայված այլ գույք:

4.3 Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ հայտարարագիրը ներառում է հանձնված, վերադարձված փոխառությունը:

4.4 Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ հայտարարագիրը ներառում է հայտարարատուին սեփականության իրավունքով պատկանող դրամական միջոցները (այդ թվում՝ բանկային հաշիվներում առկա):

4.5 Օրենքի 40-րդ հոդվածի 1.1-ին մասի համաձայն՝ հայտարարագրում ներառվում է նաև հայտարարատուի կողմից փաստացի տիրապետվող գույքը, ինչպես նաև այն գույքը, որը սեփականության իրավունքով պատկանում է երրորդ անձի, բայց ձեռք է բերվել հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին, կամ այդ գույքից փաստացի օգուտ է ստանում կամ այդ գույքը տնօրինում է հայտարարատուն:

4.6 Օրենքի 40-րդ հոդվածի 1.2-րդ մասի համաձայն՝ փաստացի տիրապետվող գույք է համարվում հայտարարատուին սեփականության իրավունքով չպատկանող, բայց նրա կողմից հաշվետու ժամանակահատվածում 90 և ավելի օր փաստացի տիրապետվող կամ օգտագործվող (անկախ նշված իրավունքների պետական գրանցումից) անշարժ գույքը, տրանսպորտի միջոցը (բացառությամբ աշխատանքային (ծառայողական) հարաբերությունների արդյունքում անձի տիրապետմանը հանձնված անշարժ գույքի, տրանսպորտի միջոցի), թանկարժեք գույքը:

4.7 Օրենքի 40-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ արժեթղթի և (կամ) այլ ներդրման դեպքում տարեկան հայտարարագրում ներառվում են տվյալ տարվա հունվարի 1-ի և դեկտեմբերի 31-ի դրությամբ արժեթուղթը և (կամ) այլ ներդրումը՝ նշելով արժեթղթի տեսակը, ձեռք բերելու օրը, ամիսը, տարին, եղանակը, արժեքը (գինը), արժույթը, գործարքի մյուս կողմի անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը, հասցեն:

4.8 Օրենքի 41-րդ հոդվածի 4-րդ մասի 17-րդ կետի համաձայն՝ հայտարարագրման ենթակա են Հայաստանի Հանրապետության դրամով, արտարժույթով կամ քնամթերային (ոչ դրամական) ձևով ստացված հետևյալ եկամուտները՝ այդ թվում կենսաթոշակը:

4.9 Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հայտարարատուի կողմից հայտարարագրում անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով:

4.10 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.11 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ **առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները** սահմանվում են օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

4.12 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.13 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինն ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.14 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.15 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին:

4.16 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

4.17 Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2021 թվականի սեպտեմբերի 17-ի «Հայտարարատու պաշտոնատար անձի գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի, նրա ընտանիքի անդամների գույքի, եկամուտների և ծախսերի հայտարարագրերի լրացման ուղեցույցը» թիվ 01-Լ որոշման 1-ին կետի 8-րդ ենթակետի համաձայն՝ գույքի ձեռքբերման դիմաց նախավճարի կամ կանխավճարի փաստացի վճարված գումարը հայտարարագրվում է «Հանձնած և վերադարձված փոխառություններ» բաժնում որպես հանձնած փոխառություն:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Օրենքով սահմանված հայտարարագրման ենթակա տվյալներին վերաբերող իրավակարգավորումներով սահմանված պահանջներն ամբողջական կերպով ներկայացված են հայտարարագրերի լրացման էլեկտրոնային համակարգում, որտեղ հայտարարատուի կողմից լրացվում են Օրենքով պահանջվող վերաբերելի տվյալները:

Հանձնաժողովի 2020 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 04-Ն որոշմամբ սահմանվել են հայտարարագրի ներկայացման և հայտարարագրված տվյալներում փոփոխություն կատարելու կարգը, հայտարարագրի լրացմանը ներկայացվող պահանջները:

Առաջնորդվելով նշված որոշմամբ սահմանված հայտարարագրի լրացմանը ներկայացվող պահանջներով՝ Հանձնաժողովը հայտարարագրերի լրացման կարգի խախտում է որակում այն դեպքերը, երբ հայտարարագրման ենթակա տվյալը լրացվել է սխալ ենթաբաժնում: Այն դեպքում, երբ հայտարարատուի ներկայացրած տվյալին վերաբերող որևէ տվյալ չի լրացվում համապատասխան դաշտում և լրացվում է այլ ենթաբաժնում՝ հայտարարատուն թույլ է տալիս հայտարարագրի լրացման կարգի պահանջների խախտման արարք, մինչդեռ, Օրենքով պահանջվող **հայտարարագրման ենթակա առանձին տվյալները չներկայացնելու կամ սխալ ներկայացնելու դեպքում՝ թույլ է տալիս ոչ ամբողջական կամ սխալ տվյալների ներկայացման արարք:**

Հանձնաժողովը գտնում է, որ խախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցը որոշելու համար անհրաժեշտ է յուրաքանչյուր գործով գնահատել, արդյոք տվյալ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների խաթարմանը: Այս առնչությամբ էական է խախտման (արարքի) որակական կողմը:

Արարքի որակական կողմը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել՝ արդյոք արարքը կարող է պարունակել Օրենսգրքով սահմանված արարքի հատկանիշներ և այնպիսի էական վնաս չի պատճառել ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը կդիտարկվի համաչափ: Սույն դեպքում, Օրենսդրի կողմից սահմանված պահանջների կատարումը նպատակ է հետապնդում հանրության համար բացահայտել պաշտոնատար անձի գույքային դրության վերաբերյալ տվյալները, որը, տվյալ դեպքում խաթարվել է Արթուր Երիցյանի կողմից, հայտարարագրման ենթակա համապատասխան տվյալը Հայտարարագրում չներկայացնելու արդյունքում:

Հանձնաժողովն արձանագրում է նաև, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի նպատակն է ապահովել հայտարարատու անձի հանրային հաշվետվողականությունը, վերջինիս հանրային գործունեության նկատմամբ վստահությունը, պետական պաշտոն

զբաղեցնող անձի գործունեության թափանցիկությունը և հնարավոր կոռուպցիոն ռիսկերից զերծ գործունեությունը:

Սույն գործով Վերաքննիչ քրեական դատարանի դատավորի օգնական Մերի Արթուրի Երիցյանի ընտանիքի անդամ Արթուրի Գեղամի Երիցյանը Օրենքի 34-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ հանդիսանալով հայտարարագիր ներկայացնելու պարտականություն կրող անձ, թույլ է տվել Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանք՝ Հայտարարագրում անզգուշությամբ ներկայացրել է սխալ կամ ոչ ամբողջական տվյալներ, այն է.

1) Հայտարարագրի «Բ.1.4. Հայտարարատուի կողմից տվյալ տարվա ընթացքում 90 օրից ավելի փաստացի տիրապետվող անշարժ գույք կամ հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին ձեռք բերված, երրորդ անձին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույք, կամ անշարժ գույք, որից փաստացի օգուտ է ստանում կամ այն տնօրինում է հայտարարատուն» բաժնում չի հայտարարագրել [REDACTED], որով խախտել է Օրենքի 40-րդ հոդվածի 1.1-ին մասի պահանջը:

2) Հայտարարագրի «Գ.1.1. Հաշվետու տարվա եկամուտներ» բաժնում չի հայտարարագրել 2023 թվականին որպես եկամուտ ստացված 6,050,000 ՀՀ դրամ կենսաթոշակը, որով խախտել է Օրենքի 41-րդ հոդվածի 4-րդ մասի 17-րդ կետի պահանջը:

3) Հայտարարագրի «Արժեթղթեր և այլ ներդրումներ» բաժնում չի հայտարարագրել «ԱՐՄԱԿՎԱ» ՍՊԸ-ի 50% բաժնետեր լինելու վերաբերյալ տվյալը, որով խախտել է Օրենքի 40-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջը:

4) Հայտարարագրի «Բ.6.1. Բանկային հաշիվների մնացորդներ (բացառությամբ ավանդների)» բաժնի «Տվյալ տարվա վերջում առկա դրամական միջոցի գումարը և արժույթը» ենթաբաժնում 540,405 ՀՀ դրամի չափով բանկային հաշվի մնացորդը հայտարարագրված չէ, որով խախտել է Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի պահանջը:

5) Հայտարարագրի «Բ.4.1. Հանձնված և վերադարձված փոխառություններ» բաժնում չի հայտարարագրել անշարժ գույքի ձեռքբերման համար կատարված

վճարումների վերաբերյալ տվյալները, որով խախտել է Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի պահանջը:

6) Հայտարարագրի «Բ.4.1. Հանձնված և վերադարձված փոխառություններ» բաժնի «Տվյալ տարվա վերջում առկա փոխառության գումարը և արժույթը» ենթաբաժնում չի հայտարարագրել տարվա վերջում հանձնված փոխառության վերաբերյալ տվյալը, որով խախտել է Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի պահանջը:

Հանձնաժողովն արձանագրում է, որ 1-ին և 5-րդ կետերում նշված խախտումների՝ Հայտարարագրում երկու ավտոտնակների և հանձնված փոխառությունների վերաբերյալ տվյալները չհայտարարագրելու պայմաններում հնարավոր չէ ամբողջական պատկերացում կազմել Արթուր Երիցյանի՝ որպես հայտարարատու անձի գույքային դրության մասին, ինչը վտանգում է Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով պահպանվող հասարական շահը:

Անդրադառնալով 1-ին կետում նշված խախտման վերաբերյալ Արթուր Երիցյանի կողմից ներկայացված պարզաբանը, համաձայն որի՝ հայրիկի մահից հետո ժառանգություն է ստացել քաղաք Երևան, [REDACTED], [REDACTED], սակայն այդ ավտոտնակների վերաբերյալ չի ստացել սեփականության իրավունքի վկայական, սակայն տնօրինել է այդ ավտոտնակները, Հանձնաժողովն արձանագրեց, որ Արթուր Երիցյանի կողմից Հայտարարագրի «Բ.1.4. Հայտարարատուի կողմից տվյալ տարվա ընթացքում 90 օրից ավելի փաստացի տիրապետվող անշարժ գույք կամ հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին ձեռք բերված, երրորդ անձին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույք, կամ անշարժ գույք, որից փաստացի օգուտ է ստանում կամ այն տնօրինում է հայտարարատուն» բաժնում հայտարարագրված չէ փաստացի տիրապետվող վերոնշյալ ավտոտնակների վերաբերյալ տվյալները, որոնք ենթակա են հայտարարագրման:

Անդրադառնալով 5-րդ կետում նշված խախտման վերաբերյալ Արթուր Երիցյանի կողմից ներկայացված պարզաբանմանը, համաձայն որի՝ նախնական գնման պայմանագրի հիման վրա անշարժ գույքի ձեռքբերման համար բանկային փոխանցման միջոցով վճարված նախավճարը չպետք է հայտարարագրվի որպես փոխառություն, Հանձնաժողովն արձանագրում է, որ Հանձնաժողովի 2021 թվականի սեպտեմբերի 17-ի

թիվ 01-Լ որոշման 1-ին կետի 8-րդ ենթակետի համաձայն՝ գույքի ձեռքբերման դիմաց նախավճարի փաստացի վճարված գումարը ենթակա է հայտարարագրման «Հանձնած և վերադարձված փոխառություններ» բաժնում որպես հանձնած փոխառություն: Նշվածից հետևում է, որ նույնիսկ եթե փոխանցված գումարն եղել է նախավճար, այն միևնույն է ենթակա է եղել հայտարարագրման Հայտարարագրի «Հանձնած և վերադարձված փոխառություններ» բաժնում, հետևաբար վարույթի մասնակցի կողմից ներկայացված պարզաբանումը գործի քննության համար էական նշանակություն չի կարող ունենալ:

Պետք է նաև փաստել, որ նշված ավտոտնակների և փոխառության վերաբերյալ չհայտարարագրված տվյալները որևէ այլ կերպ բացահայտված չեն Արթուր Երիցյանի Հայտարարագրում:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 21-րդ հոդվածը սահմանել է, որ եթե կատարված վարչական իրավախախտումը նվազ նշանակություն ունի, գործը վճռելու համար լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) կարող է խախտողին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ:

Արարքի նվազ նշանակությունը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ թեև ձևականորեն արարքը կարող է պարունակել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով սահմանված արարքի հատկանիշներ, սակայն ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը այնպիսի էական վնաս չի պատճառվել, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը դիտարկվի համաչափ: Նվազ կարևորությունը կիրառելիս անհրաժեշտ է հաշվի առնել խախտման բնույթը, դրա որակական կողմը, ինչպես նաև խախտում թույլ տված անձի վերաբերմունքը խախտման նկատմամբ:

Անդրադառնալով 2-րդ և 4-րդ կետերում նշված խախտումներին, Հանձնաժողովը արձանագրում է, որ իր կողմից հայտարարագրում բանկային հաշվի մնացորդի չհայտարարագրման հետ կապված նախորդիվ կայացված որոշմամբ՝ նվազ նշանակություն ունեցող է որակել այն դեպքը, երբ չհայտարարագրված բանկային հաշվի մնացորդը գոյացել է բացառապես հայտարարատու անձի կենսաթոշակից (տես՝ 2025

թվականի մայիսի 15-ի թիվ ՎԻՎ/120/2025 գործը): Հետևաբար հաշվի առնելով այն, որ Արթուր Երիցյանի կողմից չհայտարարագրված եկամուտը և բանկային հաշվի մնացորդը գոյացել են բացառապես նրա կենսաթոշակից Հանձնաժողովը գտնում է, որ Արթուր Երիցյանի կողմից կատարված նշված խախտումներն ունեն նվազ նշանակություն: 3-րդ կետի կապակցությամբ Հանձնաժողովը հաշվի առնելով Արթուր Երիցյանի պարզաբանումը, համաձայն որի՝ «ԱՐՄԱԿՎԱ» ՍՊ ընկերությունը երբևէ գործունեություն չի իրականացրել, հետևաբար, բաժնեմասը չհայտարարագրելը որևէ կերպ չպետք է մեկնաբանվի որպես եկամուտներ թաքցնել կամ կոռուպցիոն ռիսկեր պարունակող այլ երևույթներ: Նշված փաստը հաստատվում է նաև ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկությամբ, որի համաձայն՝ 18.01.2021 թվականի հունվարի 18-ից «ԱՐՄԱԿՎԱ» ՍՊ ընկերությունն ունի ժամանակավոր դադարեցված կարգավիճակ: Հանձնաժողովը հաշվի առնելով նաև նախորդիվ նմանատիպ դեպքերով կայացված որոշումները գտնում է, որ գործունեությունը ժամանակավոր դադարեցված լինելու հանգամանքով պայմանավորված՝ արդյունքում այդ նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների էությունը չի խաթարվել և Արթուր Երիցյանի կողմից թույլ տրված խախտումը հանրային վտանգավորության տեսանկյունից ունի նվազ նշանակություն:

6-րդ կետի առնչությամբ Հանձնաժողովը հաշվի առնելով Արթուր Երիցյանի պարզաբանումը, ինչպես նաև այն հանգամանքը, որ Հայտարարագրի «Բ.4.1. Հանձնված և վերադարձված փոխառություններ» բաժնի այլ դաշտերում հայտարարագրել է 50,000 ԱՄՆ դոլարի չափով փոխառության գումարը, որով, ըստ էության բացահայտվել է հանձնված փոխառության վերաբերյալ տվյալը, որպիսի պայմաններում ապահովվել է պետական պաշտոն զբաղեցնող անձի հանրային հաշվետվողականությունը, վերջինիս հանրային գործունեության նկատմամբ վստահության հնարավորությունը, պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) գործունեության թափանցիկությունը և հնարավոր կոռուպցիոն ռիսկերումների բացահայտումն ու դրանց նկատմամբ հանրային վերահսկողությունը:

Ամփոփելով վերոնշյալը և հաշվի առնելով այն, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված արարքի համար նախատեսված է վարչական

պատասխանատվության ոչ հստակ սահմանաչափ (տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով), Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով վարչական տույժ կիրառելիս պետք է հաշվի առնել ինչպես խախտման բնույթը, այնպես էլ պատասխանատվությունը ծանրացնող կամ մեղմացնող հանգամանքները:

Հանձնաժողովը գտնում է, որ սույն գործով առկա չէ Օրենսգրքի 34-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը ծանրացնող որևէ հանգամանք, ինչպես նաև առկա չէ Օրենսգրքի 33-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով, 244.17-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Արթուրի Գեղամի Երիցյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի՝ 200 000 ՀՀ դրամի չափով:

2. Տուգանքը պետք է վճարվի իրավախախտողի կողմից գանձապետական 900005001335 «Իրավախախտումների համար կիրառվող վարչական տուգանքներ և պատժամիջոցներ» հաշվեհամարին՝ վճարման անդորրագրի **«նպատակ» դաշտում պարտադիր նշելով սույն որոշման համարը:**

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արթուրի Գեղամի Երիցյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Արթուրի Գեղամի Երիցյանին տրամադրել եռօրյա ժամկետ Հայտարարագրի համապատասխան բաժնում ուղղում կատարելու համար:

5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՅԱՆ